



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



« 25 » 06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0 1 1 3 - 2 1

Ձեռնարկողը՝

«Սիփան Հյուրանոց» ՍՊԸ

ՀՀ, Կոփայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3

Գործունեությունը՝ Կոփայքի մարզի, Աբովյան քաղաքի, Բարեկամության հրապարակ 3/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

ՀՀ, Կոփայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0 113-21
<25> 06 2021թ.

Կոտայքի մարզի, Արուսյան քաղաքի, Բարեկամության հրապարակի 3/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի և առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Սիփան Հյուրանոց» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Արուսյան, Բարեկամության հրապարակ, թիվ 3/1

Ներածական մաս Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաբնակարան բնակելի շենքեր և առևտրի կենտրոն:

Համալիրի կառուցման նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 07-002-0047-0015 վկայականը, Արուսյանի համայնքապետի կողմից տրված 10.05.2021թ. N 62 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

- Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 7671.36 քմ,
- շինությունների կառուցապատման մակերեսը՝ 1458 քմ,
- ասֆալտապատման մակերեսը՝ 270 քմ,
- սալիկապատման մակերեսը՝ 922.7 քմ,
- խաղահրապարակի մակերեսը՝ 160.5 քմ,
- կանաչապատ տարածքի մակերեսը՝ 4860.16 քմ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Քանաքեռի հրաբխային սարահարթի վրա, որն ունի բլրոտ ռելիեֆ: Միաժամանակ ուսումնասիրվող տարածքը հանդիսանում է Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան նախալեռնային մասը, և տեղակայված է ջրառատ Հրազդան գետի կիրճի ձախափնյա մասում:

Օրոգրաֆիկ տեսակետից ուսումնասիրվող տարածքը իրենից ներկայացնում է բլրակային բազալտային սարահարթ:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1400÷1402 մետրերի սահմաններում:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են օլիգոցենի դիտրիտային բազալտները, որոնք տեղադրված են երրորդական նստվածքային ապարների տակ:



